ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/216

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.08.2021թ. թիվ 26/26-1/12709-2021 գրությամբ Արսեն Հովհաննիսյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 03.08.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/3893 գրության հիման վրա, 10.08.2021թ. թիվ 26/26-1/12709-2021 գրությամբ նախաձեռնել է Արսեն Հովհաննիսյան Ա/Ձ-ին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Արսեն Հովհաննիսյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Արսեն Հովհաննիսյան Ա/Ձ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/216 ընթացակարգի շրջանակներում 13.08.2021թ. ժամը 09:37-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.08.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/3893 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ԱՐՍԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ» ԱՁ-ի միջև 18.05.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-8/4-1 ծածկագրով գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հուլիսի 29-ին միակողմանի լուծել է ԳՀԱՊՁԲ-21-8/4-1 ծածկագրով գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 2021թ. օգոստոսի 2-ին հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են վերոնշյալ մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/216 ընթացակարգի շրջանակներում 13.08.2021թ. ժամը 09:37-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2021/216 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/216 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և Արսեն Հովհաննիսյան Ա/Ձ-ի միջև 18.05.2021թ. կնքվել է ԳՀԱՊՁԲ-21-8/4-1 ծածկագրով ապրանքի մատակարարման

պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 200 հատ մեդալներ, կրծքանշաններ՝ «Ռազմական համագործակցության համար» մեդալ մատակարարման ժամկետ է սահմանվել 2021թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝ 2-րդ եռամսյակ:

3. Արսեն Հովհաննիսյան Ա/Ձ-ն ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված 08.07.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«18.05.2021թ. կնքված ԳՀԱՊՁԲ-21-8/4-1 պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման ապահովումը մեր կողմից հնարավոր չէ իրականացնել, ուստի խնդրում եմ լուծել վերոնշյալ պայմանագիրը»:

4. ՀՀ պաշտպանության նախարարությունը Արսեն Հովհաննիսյան Ա/Ձ-ին ուղղված 29.07.2021թ. թիվ ՆՏԱ/2433 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և Արսեն Հովհաննիսյան Ա/Ձ-ի միջև 18.05.2021թ. կնքված ԳՀԱՊՁԲ-21-8/4-1 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում Ձեր կողմից 2021թ. երկրորդ եռամսյակում պետք է մատակարարվեր 200 հատ « Ռազմական համագործակցության համար» մեդալ, որը չի մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հուլիսի 29-ին վերոնշյալ չմատակարարված ապրանքի մասով միակողմանի լուծել է Պայմանագիրը»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 02.08.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս,

ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.08.2021թ. թիվ 26/26-1/12709-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 03.08.2021թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/3893 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և Արսեն Հովհաննիսյան Ա/Ձ-ի միջև 18.05.2021թ. կնքվել է ԳՀԱՊՁԲ-21-8/4-1 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 200 հատ մեդալներ, կրծքանշաններ՝ «Ռազմական համագործակցության համար» մեդալ մատակարարման ժամկետ է սահմանվել 2021թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝ 2-րդ եռամսյակ:

Արսեն Հովհաննիսյան Ա/Ձ-ն ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված 08.07.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«18.05.2021թ. կնքված ԳՀԱՊՁԲ-21-8/4-1 պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման ապահովումը մեր կողմից հնարավոր չէ իրականացնել, ուստի ***խնդրում եմ լուծել վերոնշյալ պայմանագիրը***»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը Արսեն Հովհաննիսյան Ա/Ձ-ին ուղղված 29.07.2021թ. թիվ ՆՏԱ/2433 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և Արսեն Հովհաննիսյան Ա/Ձ-ի միջև 18.05.2021թ. կնքված ԳՀԱՊՁԲ-21-8/4-1 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում Ձեր կողմից 2021թ. երկրորդ եռամսյակում պետք է մատակարարվեր 200 հատ « Ռազմական համագործակցության համար» մեդալ, որը չի մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հուլիսի 29-ին վերոնշյալ չմատակարարված ապրանքի մասով միակողմանի լուծել է Պայմանագիրը»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 02.08.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>5 օրից ավելի</u>:***

Այսպիսով՝ համաձայն գործում առկա նյութերի՝ արձանագրում եմ, որ Արսեն Հովհաննիսյան Ա/Ձ-ն իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 18.05.2021թ. կնքված Պայմանագրով նախատեսված 200 հատ մեդալներ, կրծքանշաններ՝ «Ռազմական համագործակցության համար» մեդալ ապրանքի մատակարման ժամկետը խախտել է 5 օրից ավելի, ինչի արդյունքում վերջինս թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ Արսեն Հովհաննիսյան Ա/Ձ-ն ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված 08.07.2021թ. գրությամբ հայտնել է, որ մատակարարման ապահովումն Արսեն Հովհաննիսյան Ա/Ձ-ի կողմից հնարավոր չէ իրականացնել և խնդրել է լուծել Պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Մասնակիցը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Արսեն Հովհաննիսյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.08.2021թ. թիվ 26/26-1/12709-2021 գրությամբ Արսեն Հովհաննիսյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Արսեն Հովհաննիսյան Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**